

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԼԵՒՈՆ ԵՐԵՔՏԱՍԱՆ ԵՐՈՐԴԻ

ԿԵՆԱՑ ԵՒ ԵՕԹԵԱՄԵԱՑ ԲԱՀԱՆԱՑԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

(ՏԵՍ ՀԱՏ. ԻԵ. ԷՋ 369)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

4. Թելախալ 'ի Պենեւէկդ. — 5. Թելախալ Սիօղէքնս
և փերոձիայի. — Առաքելական Նուիրակ Պելձիոյ,



ՈՎԱԿԻՄ՝ փէյի քիչ ատենէն իւր ստացած գիտութիւնն և
հանճարն՝ եկեղեցւոյ և հասարակաց օգտին համար ստի-
պուեցաւ գործածելու:

Պենեւէկդի գաւառն և քաղաքն որ ֆահանայապետաց
իշխանութեան կը հպատակէր, նոյն ատենները մեծ հոգ
կը պատճառէր կառավարութեան. Այս հոգ պատճա-
ռովն՝ ժողովուրդը չէր, վասն զի մինչև նոյն ատեն ամենահաւատա-
րիմ գտնուեր էր իր հպատակութեան պարտուց նկատմամբ, այլ եր-
կրին մասնաւոր պարագայք և հոն հանդիպած նոր դէպքեր: Պենեւէկ-
դեան գաւառը՝ Նէապօլսոյ թագաւորութեան մէջ է, և նոյն ժամանակ
մեծն Նափոլէոն տիրելով Նէապօլսոյ թագաւորութեան՝ այս գաւառու
ալ յափշտակեց իր օրինաւոր իշխանէն: Եւ մինչդեռ Նէապօլիս Մու-
րատի գաւազանին կը հպատակէր՝ Պենեւէկդ ալ իբր աւատական կա-
լուած մը Թալլըրան հռչակաւոր շողովարարին շնորհեցին իբր 'ի վարձ
իւր արդեանց:

Այս պատճառաւ աւագակութիւն և յափշտակութիւնն ալ ֆահա-
նայապետին այս գաւառին մէջ տարածուեցաւ, և օրինաց պակա-
սութեան համար՝ պենեւէկդեան գաւառը՝ մաքսանենդից կեդրոնա-
տեղի մ' եղաւ: Պենեւէկդ քաղաքին մէջ չարիքն արմատացեր էր,
հարուստ և նշանաւոր ընտանիք՝ կամ չարիք ախորժելով և կամ փա-
ռասիրութեան փափագելով՝ կը պաշտպանէին զչարագործս, և կա-
ռավարութիւնն անկարող էր ոչ միայն բնաջինջ բառնալու, այլ և ոչ
խակ կրնար այս չարեաց առջին առնել:

Գրիգոր ԺԶ բարեկարգութիւն հաստատելու համար՝ ամէն կարելի
միջոց ուղեց 'ի գործ դնելու Բայց նախ և առաջ հաստատուն բնաւորու-
թեամբ, սրամիտ, խոհեմ անձ մի պէտք էր իբր իրեն ներկայացու-
ցիչ վերոյիշեալ քաղաքին մէջ. և այս անձն էր Գեոր. Յովակիմ փէյի:
Գեոր երեսուներեք տարեկան իւր առանձինն, պարկեշտ և քաջուած

կենաց մէջ իսկ՝ ցուցեր էր այլոց իր հոգւոյն չքնադագիւտ յատկութիւնքն։ Քահանայապետն յուսաց որ այսպիսի առաքինութիւն և բարեւաւութիւն խառն իւր երկտասարդական աշխուժին հետ՝ մեծամեծ արդասիք, յառաջ պիտի բերէին. և յիրաւի չխաբուեցաւ։

1838 փետրուար ամսոյն Գեր. ֆէլչի թողուց զՀոմ և իւր սիրելի ուսումնական զբաղանքն՝ և ուղեւորեցաւ ժամանելու այն վայրը՝ զոր իւր իշխանն և Գլուխն իր խնամաց, յանձնեւ էր։ Այն ատեններն արդէն ճանապարհաց զիւրութիւնք նուազ էին և եղանակին խստութիւնն աւելի դժուարացուց։ Նորընտիր թեմակալն՝ իւր ակնուն հասանելէն երեք օր վերջը՝ վտանգաւոր անդէ մը բռնուեցաւ։ Այս հիւանդութիւնը շուտով ծանր կերպարանք մ'առաւ, անուանի և փորձառու բժշկաց խնամքն և դարմանն բովանդակ 'ի զուր եղաւ, և յուսահատական դրից մէջ էր։

Քաղաքին բոլոր բնակիչք որ դեռ զինքը միայն անուամբ և համբաւով կը ճանչնային՝ մեծ ցաւ կը զգային այս մատաղաւտ կորստեան վերայ։ Հասարակաց աղօթք սահմանուեցան իրենց Հովուին բժշկութեան համար, և քաղքէն դուրս հանդիսաւոր թափօրով և մեծ բազմութեամբ ազաշխարհանոց այցելութիւն մ'ըրին Շնորհաց կոչուած Տիրամօր ուխտատեւոյնն՝ նոյն նպատակաւ։ Հիւանդին մահուան անկողնոյն քովն էր նաև Պենեւէնդի Յիսուսեանց դպրոցին սրբակաց Մեծաւորը՝ հայրն թեոսանաորի։

Հասարակաց աղօթից ձայնակցելով՝ հիւանդին գլխուն վրայ Ս. Փլրանկիսկոսի մասունքը դրաւ, և ռանդեամբ խնդրելով փափագելի առողջութիւն։ Աստուած լսեց իւր պաղատանքն. ֆէլչի սկսաւ կամաց կամաց վրայ դնել և մերձակայ անձանց խնամոց շնորհիւ կատարելապէս առողջացաւ։ Ամէնքն ուրախացան, բայց մանաւանդ Քահանայապետն Գրիգոր, որ զրիթէ ամէն օր տեղեկութիւն կ'առնէր հիւանդին վիճակին վրայ։

Գերազ, Յովակիմ ֆէլչի այս ծանր հիւանդութենէն ազատելով իսկոյն պենեւենդեան դաւառին կառավարութիւնը ձեռք առաւ և բարի անձանց սէրն և յարգանքն ստանալով՝ չարաց ահաւոր սպառնուիք մ'եղաւ։ Առաջին օրերէն լաւ ըմբռնեց իրեն յանձնուած գործոյն մեծամեծ զժուարթութիւնքն. բայց որպէս զի կարենաւ միտքը զրաժն 'ի գործ դնել՝ առանց վհատելու սկսաւ նախ խոկալ իր բռնելիք ուղղութեան վրայ։

Նէպոլիս գնաց՝ որպէս զի թագաւորին հետ նախազգուշութիւններ հաստատեն ընդդէմ մարտանենգից։ յետոյ չարապարծաց ետեւէն ինկաւ և իրենց ապաստանած գղեականներէն և անտառներէն քշեց հալածեց։ Անգամ մը քահանայապետին զինուորք Մէսրամպրունի դիւղին վրայ յարձրկեցան և տաճնուշորս աւազակ գերեցին։ Գեր. ֆէլչի արդարադատ խստութեամբ պատժեց զիրենք և անդրդուելի հաստաւ

տամուռութեամբ կը պահանջէր որ ամէնքն ալ հաւասարապէս օրինաց հպատակին: Ամէն իր այս տեսակ գծուար գործոց մէջ ոչ երբեք կողմնակցութեան ոգւով գործեց, այլ մի և նոյն արդար վճռով կը պատ-
ժէր թէ՛ զհարուստն և թէ՛ զղղբատն: Դէպք մը միայն պատմենք՝ յուրում՝ որոշ պիտի տեսնուի իր հոստատուն բնակողութիւնն և անվախ համարձակութիւնն: Պենեւէնդ հասնելէն քիչ վերջը՝ օր մը տեղացի աղնուական հարուստ պարոն մը ներկայացաւ Գեր. ֆէյշիի և բազմաթիւ գանգաւաններ ուղղից իւր խիստ կառավարութեան դէմ, յաւելլով թէ հարկապահանջք և մաքսառուք չեն տկնածեր իմ մարդի-
զական իշխանութենէս: ֆէյշի շատ աշխատեցաւ որ խելքը գլուխը բերէ և յայտնի կերպով ըստ. Պարոն, օրէնք՝ հասարակաց համար տրուեր են: Մարդէզը այս խօսքերուս վրայ՝ լի բարկութեամբ սպառ-
նացաւ որ Հոռմ պիտի երթամ և թեյակալը պաշտօնընկէց պիտի ը-
նեմ: « Հանդարտ կեցիր, պատասխանեց ծանրութեամբ և անխռով ապագայ քահանայապետը. յիշէ պարոն Մարդէզ՝ որ վատիկան եր-
թալու և խնդիրքդ ներկայացնելու համար՝ պէտք է նախ Ս. Հրեշ-
տակ Դոյեկէլն անցնիր »: Մարդէզը դողալով լսեց այս խօսքերը՝ և քիչ վերջը ֆէյշիի պալատէն մեկնելու ժամանակ՝ տեսաւ որ իր մաք-
սանեկցից ժողովատեղի եղած դղեակը՝ քահանայապետական զի-
նուորք յարձակմամբ առեր են՝ գերելով մէջը գտնուած բոլոր աւա-
զակներն և անօրէն անձինք: ֆէյշի իր այս մեծ հաստատամտու-
թեամբ՝ բոլոր պենեւենդեան գաւառը մաքրեց սրբեց, և կարգն և օ-
րէնքը վերստին հաստատեց: Սահմանազխոց վրայ բարեկարգ և
խառապահանջ մաքսատուններ կանգնեց՝ օգնութեամբ իր Սղէնպի-
նի բարեկամին: Ներքին կողմերն ալ ճանապարհաց և վաճառակա-
նութեան նորանոր ապահովութիւնք հնարելով՝ ամէն բան կարգա-
ւորեալ վիճակի մէջ դրաւ: Բոլոր այս դժուար գործերը՝ երեք տա-
րուան մէջ կատարեց. բայց 'ի ժողովրդեան երախտագիտութենէն՝
ֆէյշի արժանաւոր գովեստ ընդունեցաւ թէ Ս. Քահանայապետէն և
թէ Նէապոլոյ թագաւորէն:

Պենեւենդեոց ժառանգահի համար Աստուածածնայ նուիրած մե-
ծագործ տաճարին առաջին քարը՝ ֆէյշի հանդիսաւոր կերպով զե-
տեղեց, քաղաքին ութսնամեայ ծիրանաւորին տկարութեան պատ-
ճառաւ: Երկու մեծագործ ճանապարհներ ալ բացաւ, և ծանր հար-
կերը մեղմացուց: Բայց որպէս զի իր միտքը դրած ծրագիրն 'ի գործ
դնէ՝ Հոռմ գնաց ֆէյշի՝ որպէս զի անձամբ խօսի Ս. Քահանայապե-
տին հետ, և պէտք եղած արտօնութիւններն և միջոցները խնդրէ:

5. ֆէյշի Հոռմ կոչուեցաւ, և Քահանայապետն Գրիգոր ԺԶ իր
վրայ ունեցած մեծ համարման 1841ին ցոյց մը տալու համար՝ նախ
Սրբնեղոյի և քիչ յետոյ ֆերուճիայի թեյակալ անուանեց, Նոյն տա-
րւոյն օգոստոս ամսոյն՝ իր նոր գաւառը գնաց, և իր առաջին գործն

եղաւ նախագահել 'ի պատիւ Ս. Վերոնիգա ճիւղիանիի տրուած հանդիսից և արարողութեանց: Այս գաւառային հանդիսէն վերջը 'ի փէրուծիա դառնալով՝ սկսաւ Քաջահայապետին (որ նոյն ատեն իւր գաւառաց այցելութեան ելեր էր) ընդունելութիւնը պատրաստել և կարգի դնել: Գեր. ֆէյչիի ձեռքին տակ եղած ամէն քաղաք կը ջանային գերազանցել մէկզմէկ փառաւոր և չքեղ ընդունելութեամբ: 'ի փէրուծիա քսան օրուան մէջ՝ նոր ճամբայ մը շինեցին, և կոչեցին Գրիգորեան 'ի յիշատակ իւր այցելութեան: Հոս տրուած փառաւոր հանդէսը 'ի պատիւ այցելութեանն՝ շատ հաճոյ եղան Քաջահայապետին, որ և յաճախ գովեստիւք խօսեցաւ՝ զայնս կարգադրողին ֆէյչիի վրայ: Գրիգոր Ժ.Չ այսպէս օր ըստ օրէ առաւել ևս կ'ըմբռնէր և կը տեսնէր Գերպ. ֆէյչիի չքնաղ յատկութիւնքն, և կը յուսար զինքն 'ի կեղեցւոյ օգտակարագոյն գործոց ծառայեցնել:

1842ին իրեն յանձնուած ընդարձակ գաւառն այցելեց, բոլոր հասարակաց գործերը կարգի դնելով. ամենայն ուշադրութեամբ հոգ կը տանէր հասարակաց ապահովութեան, և ամենուն բարօրութիւնն այնպէս կը հոգար՝ որ շատ միտքարուեցաւ տեսնելով որ գէթ քանի մը օր բոլոր քաղաքին բանտերն դատարկ մնացին՝ սճրագործաց սակաւութեան պատճառաւ: Քաղաքին խնայութեան արկիւն ալ վերահաստատեց, և ընկերագրեցաւ այս օգտակար հաստատութեան՝ առաջին դրամագլուխը կազմելու համար:

6. Երբ Գեր. ֆէյչի մեծ խոհեմութեամբ և զոհութեամբ կը կառավարէր փերուծիա գաւառն, յանկարծակի 1843ին սկիզբները դարձեալ Հոով՝ կոչուեցաւ, և անդ ծանուցին՝ որ Սրբազան Քաջահայապետը զինքն որոշեր էր Առաքելական նուիրակ Պելճիոյ: Յուլի 27ին ծիրանաւորաց նիստին մէջ ալ՝ կոյուներ էր տնտեսական արքեպիսկոպոս Տամիազի: Ահա այսպէս կորսնցուց փէրուծիա իր իմաստուն թեւալան. բայց քիչ ատենէն դարձեալ պիտի գտնէր զինքն, և աւելի սերտ և սուրբ կապանօք պիտի միտնար ընդ նմա: Գեր. ֆէյչի յաջորդ ամիսն փետրուարի 19ին գեռ երեսուն և երեք տարին չաւարտած՝ բարձրացաւ 'ի սուրբ օծումն եպիսկոպոսութեան, Ս. Լաւրենտիոսի տաճարին մէջ օծեց զինքը՝ ծիրանաւորն Լուդովիկոս Լամպրուքինի:

Մարտ 19ին ուղևորեցաւ իւր նոր պաշտօնատեղին, և Զիվիթավէք քիոյէ շոգենաւ նստելով՝ հանգստութեամբ հասաւ 'ի Մարսիկա. կը տրեւով զՎաղդիա Ռէյմսի, Լիոնի և Մէգիէճի ճամբով մտաւ 'ի Պելճիա, և քանի մը օր 'ի Նամիւր կենալէն վերջը՝ ապրիլ 11ին մտաւ 'ի Պրիւքսէլ: Սիրով ընդունեցաւ զինքը իւր նախորդն Գեր. Ֆորնարի որ եկեղեցական ակադեմիային մէջ ֆէյչիի ուսուցիչ էր և այն ժամանակ որոշուեր էր 'ի նուիրակութիւն Գաղղիոյ: Կը թագաւորէր 'ի Պելճիա Լէօքլու Ա. Գոպուրկ — Սաքսոնիոյ տնէն, հայր այժմեան թա-

գաւորին, Նորընտիր Առաքելական Նուիրակն իւր պաշտօնին երեք տարուան շրջանին մէջ՝ շատ անգամ՝ առիթ ունեցաւ տեսնելու և ըմբռնելու այս երկրին ժողովրդեան ջանքն և եռանդն՝ ի բարի գործըս, որը օգտակար եղան թէ եկեղեցւոյ և թէ հայրենեաց։ 1844 տա-
րւոյն յունիս 2ին նոյն իսկ մայրաքաղաքին մէջ Մատրան Աստուա-
ճահին (Notre Dame de la Chapelle) հրաշագործ պատկերին դարու-
դարձին փառաւոր թափօրը կատարեց բազմութեամբ հաւատացեցող
և օտարականաց։

Փէչչի նոյն իսկ իւր Նուիրակութեան ժամանակ մեծ հոգ և խը-
նամբ տարաւ ուսումնական հաստատութեանց, մանաւանդ անոնց՝
յորս երիտասարդութիւնն կը յաճախէր. վասն զի լաւ ըմբռներ էր
թէ որչափ կարեւոր և անհրաժեշտ պարտք է՝ լաւ կառավարել ու-
սանող երիտասարդութիւնը թէ ի բարի վարս և թէ յողջամիտ վար-
դապետութիւնս կրօնից։ Ի Պրիւքսէլ յաճախ կ'այցնէր Ս. Միքայել
լի դպրոցը, ուր և փառաւոր հանդիսով ուսման նոր ընթացք մի հաս-
տատեց։ Ամենայն ոք գիտէ թէ ի Պիքնիա ուսմունքը, գիտութիւն և
գրականութիւն մեծ յարգ ունին նոյն իսկ յաշս ռամկին, և իրենց վեր-
ջին երկու մեծ խռովութեանց նպատակն ալ էր ուսումնական ազա-
տութիւն. և երբ ստուգիւ ազատեցան ի բռնութենէ՝ ամենայն արա-
գութեամբ և անձնօրրութեամբ երկրին ամէն անկեանց մէջ դպրոց-
ներ և համալսարաններ սկսան կանգնել. երկրին այս ընդհանուր
շարժման մէջ ուղղափառքս ևս չուզեցին ստոր մնալ. քան զազատամիտս.
և 1834ին ընդ պաշտպանութեամբ Պելճիայի եպիսկոպոսաց՝ Լուվէնի
համալսարանը բացին։ Փէչչի շատ կը փափագէր տեսնել այս համա-
լսարանը՝ որ արդէն տասը տարիէ ի վեր կը ծաղկէր և շատ միսթա-
րական արգասիք ունեցեր էր. շատ չուշացաւ, զայն ալ այցելեց։ Տե-
ղական օրագրէ մը քաղելով կը գնենք աստ այս առաջին այցելու-
թեան մանրամասն պարագաները.

« 1843 յուլիս 27ին ուղղափառաց համալսարանին մէջ իրաւագի-
տութիւն և աստուածաբանութիւն ուսանողաց սկզբնաշարժ նը-
շանաւոր հանդէսը պիտի կատարուէր։ Առաքելական Նուիրակն
Փէչչի ուղեց անձամբ ներկայ գտնուիլ այս հանդիսին. Նոնսի եպիս-
կոպոսին ընկերակցութեամբ հասաւ ի Լուվէն, և ընդառաջող հա-
մալսարանական խմբին ողջոյնն ընդունելէն վերջը՝ դէպ ի համալսա-
րանն ուղղեց իւր ընթացքն, ուր կը սպասէին իւր կատարեան ամէն ու-
սուցիչք իրենց նշանազգեստով. Յետ արտօրողութեանց ընդունելու-
թեան՝ Գեր. Նուիրակը գրատան սրահը գնաց, ուր ուսանողաց խումբ
մ'ընդունեցաւ. իրաւագիտութեան կաճառին ուսանողաց մին՝ իւր
դասակցաց կողմանէ գեղեցիկ ճառ մ'արտասանեց, որուն այսպէս
պատասխանեց Նուիրակն՝ իտալերէն լեզուով. « Բարեբաղդ կը հա-
մարիմ՝ զիս՝ տեսնելով այսպիսի հաստատութիւն մը, որոյ հիմնադիրն

է Պեճիկոյ կղերին ուսումնասէր ոգին, արագ ընթացքն և յառաջադի-
մութիւնն: Այս համալսարանին հաստատութեան մէջ մասն ունի ոչ
միայն կղերն, այլ նաև յարգելի տեսուչն, իմաստուն ուսուցիչք և բու-
վանդակ պեճիկացի ուղղափառք... Յիրաւի, լուվէնի նախնի համա-
լսարանին աւանդութիւնք դեռ կանգուն և կենդանի են, և գուր, պա-
րոնայք, ձեր եռանդեամբ և ուսումնապիտութեամբ ասքի վրայ պիտի
պահէք զանոնք. արդէն կը տեսնեմ որ անցելոյն հետեւելու հետա-
մուտ էք, և իկեղեցի և հայրենիք կրնան իրաւամբ յուսալ ձեր վը-
րայ: Եթէ այս շաւղէն բնաւ չխոտորիք, անտարակոյս եմ որ թէ եկեղե-
ցւոյ և թէ հայրենեաց օգտակար պիտի լինիք՝ ձեր գործովն և հան-
ճարով: Իմ սիրտս իսկ այս սիրելի և ազնուական երիտասարդութեան
առջև շատ զգածուեր է, և չեմ տարակուսիր որ օր մը այս երիտա-
սարդութիւնն Պեճիկոյ երջանկութիւն և պարծանք պիտի լինի »:

Միջօրէին՝ Նուիրակը մանրամասնաբար այցիւնց Համալսարանին
ամէն մասանց, և սրտի մեծ գոհութիւն զգաց տեսնելով՝ որ այս ուղ-
ղափառ մեծ հաստատութեան ամէն մասունքը ծաղկեալ և բարեկարգ
վիճակի մէջ են: Երեկոյեան մօտ՝ վերատեսչին բնակութեան առջև՝
ուր կը գտնուէր Նուիրակն, չալակերաք զուարթ ցայգերգ (serénade)
մը հնչեցուցին: Երկրորդ օրը Գեր. Նուիրակը Համալսարանին Մա-
տրան մէջ մատոյց իւր Պատարագն, և քիչ վերջը թողով զլուվէն
գարձաւ 'ի Պրիւքսէլ »:

Իւր առաքինութեամբք և գիտութեամբ արժանաւոր կերպով զՍ.
Գահը ներկայացնելով՝ Գեր. Փէչչի նոյն իսկ թագաւորին և քաղաքա-
կան անձանց սէրն և վարկն շահեցաւ: Այս մասին ալ թողունք որ
տեղացի նշանաւոր անձ մը խօսի.

« Արքայն Լէօքլաւ Ա. տեսնելով Գեր. Նուիրակին առաքինութիւնը
իմաստութիւնն և խոհեմութիւնն՝ շատ համարմունք ստացաւ, իրեն
խորհրդական և բարեկամ ըրաւ, և Նուիրակն արքունեաց սովորա-
կան հիւր մ'եղաւ. թագաւորն յաճախ երկար կը խօսակցէր իրեն
հետ և միշտ դժուար և ծանր իրաց վրայ իւր խորհուրդք կը խըն-
դրէր: Բայց Առաքելական Նուիրակը ոչ երբեք անպատասխան մնաց,
այնպէս որ թագաւորն յաճախ խօսակցութիւնը կը վերջացնէր այսպի-
սի բացատրութեամբ. « Յիրաւի, Գերապայծառ, քու եպիսկոպոսական
արժանապատուութեանդ համեմատ քաղաքագէտ ես »: Մարիամ
Լուիզա թագուհին ալ ամէն անգամ իւր որդւոց համար Նուիրակին
օրհնութիւնը կը խնդրէր:

Շատ դիպաց մէջ արքեպիսկոպոսն Փէչչի ցըցուց իւր ուղղամտու-
թիւնն և խոհեմութիւնն հին և վտանգաւոր թշնամութեանց և վիճա-
բանութեանց վերջ տալով և զոգիս խողաղելով. լսելով հռենոսեան
գաւառաց մէջ եղած հերետիկոսական ոգին՝ իրեն Քահանային պատ-
ճառաւ, Նուիրակը թողուց իւր աթոռն, և այս նիւթիս վրայ խօսակ-

ցելու և խորհրդակցելու գնաց Գոլոնիոյ, Դրեվիրի և Մակոնցայի եպիսկոպոսաց հետ. և մեծ ջանք ըրաւ որ այս չար ոգին չյառաջացած իսկոյն արմատախիւ ընէ :

Ի Պրիւքսէլ կատարած երեք տարուան նուիրակութեան ժամանակ Գեր. ֆէլչի ամէն տարի մասնակցեցաւ Պելճիոյ եպիսկոպոսաց 'ի Մալին կատարած ժողովքին, և 1844ին ժողովքին մէջ լինէն առաջին անգամ խորհուրդ տուաւ հաստատել 'ի Հռովմ Պելճիական դըպրոց մը. իւր խորհուրդն ամէնքն ալ սիրով ընդունեցան. Նուիրակն իւր անձնական սղոյթութեամբ գործը զիրացուց, և յաջորդ տարին դպրոցը կանգնեցին ֆահանայապետական հրովարտական :

Սակայն նոյն ժամանակ վախճանեցաւ փերուճիայի եպիսկոպոսը, և քաղաքացիք որ արդէն զֆէլչի շատ լաւ կը ճանչէին՝ զինքն ուղեցին իրենց Հովիւ. Շատ ուղաչեցին զՍրբազան ֆահանայապետն, որ վերջապէս զիջաւ իրենց խնդրուածոց, 1846 տարւոյն Յունուար 19ին Եփրանաւորաց ժողովքին մէջ՝ ֆէլչի փերուճիայի եպիսկոպոսանուանեցաւ. Շատ տխրեցան Պելճիացիք, մանաւանդ մայրաքաղաքին բնակիչք և ծանօթ անձինք. թագաւորն ամենէն աւելի ցուեցաւ և իր սէրը և բարեկամութիւնը յայտնելու համար իւր Կարգին մեծ շղթայն շնորհեց Նուիրակին : Բայց ասով ալ գոհ չլինելով՝ ինքնագիր նամակ մը յանձնեց ֆէլչիի առ Գրիգոր ԺՉ, յորում շատ կը գովէր իւր բռնած ընթացքն 'ի Պելճիա : Այս նամակին չկրցաւ պատասխանել. վասն զի ֆէլչի հազիւ Հռովմ հասաւ՝ Գրիգոր ԺՉ ալ վախճանեցաւ :

Փէլչի Խտայիա դառնալէն առաջ՝ յԱնգղիա ուղևորեցաւ, և ամիս մը Լոնտրա կենալով՝ վիկտորիա թագուհւոյն ալ ներկայացաւ : Անկից 'ի փարիզ անցաւ, և հոն ալ Լուի — Ֆիլիպին ներկայացաւ. ԿԳաղղիա ալ թողլով՝ անցաւ յիտալիա, հասաւ 'ի Հռովմ, և կը յուսար ֆահանսույն յապետին ներկայանալ. բայց ինչպէս արդէն վերը յիշեցինք իւր Հռովմ հասած օրը արդէն ֆահանայապետը շատ ծանր վիճակի մէջ էր :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԿ

1. — ֆերուճիայի արքայը կը նստի. 2. Կդերանցիկն վրայ ունեցած մեծ խնամքը. — 3. Թեմիկն վրայ ցուցած հովուական հոգն. — 4. Եփրանաւոր կ'անուանուի. — 5. Եփրանաւորն ֆէլչի և ֆերուճիա 1856 և 60ին փոփոխութեանց ժամանակ. — 6. Գործունէութիւն և եռանդն ֆէլչի ճիրանաւորին. — 7. Եփրանաւորաց խմբին Գանեքեց կ'անուանուի. իւր յետին գործերն 'ի ֆերուճիա :

Ա. — Երբ Գեր. ֆէլչի 'ի Հռովմ հասաւ՝ իսկոյն վախճանեցաւ Գրիգոր ԺՉ. և իրեն յաջորդեց Պիոս Թ. Երկու եպիսկոպոսունք ալ մի և նոյն ժամանակ նոր պաշտօն կը ստանձնէին, առաջինն պիտի կա

աւարտէր փերուճիայի եկեղեցին. իսկ երկրորդն ընդհանուր եկեղեցին. բայց երկուքին իշխանութիւնն ալ նոյն տեղութիւնն ունեցաւ. վաւերն զի թէպէտ Գեր. փէյլի իր նոր պաշտօնէն ստիպեալ վերջին ամիս. ներք. ի Հռովմ. կը բնակէր, բայց միշտ մինչև իւր քահանայապետութիւնն՝ այն թեմը միջնորդաբար կը կառավարէր: Այս կերպով Աստուած կը փափագէր որ Պիոս Թ. երկար քահանայապետութեան յաջորդոյն՝ երկարագոյն ևս պարտաստութեամբ և արդեամբ ստանձնէր այս գերագոյն պաշտօնն: Ս. Գահին պարտապան և նոր քահանայապետին կառավարութեան առջի շաբաթները փէյլի Հռովմ. կենտրով՝ առիթ ունեցաւ ծիրանաւորաց փակմանէն առաջ՝ ներկայանալ Մասդաի Ֆէրրէզգի ծիրանաւորին, և նոյնպէս յետիւր ընտրութեան ի քահանայապետութիւն՝ ուրախակցողաց և յարգողաց առջիններէն մին եղաւ: Պիոս Թ. տեսնելով իւր առջև այն եպիսկոպոսն՝ որոյ հետ դեռ ծիրանաւոր խօսակցելու էր Պելճիոյ գործոց և Պրիսթէլի նստիւրաւ կոթեան նկատմամբ՝ դուռնադուռ խօսքերով գովեց իւր ըրած մեծ գործերն ի Պելճիա և զեկեղեցին պայծառացնելու ցուցած ջանքն:

Նորընտիր եպիսկոպոսն՝ իւր հանգիստաւոր մուտքն ի փերուճիա յուլիս 26ին ուղեց կատարել, որ էր տօն Ս. Աննայի, և իւր հանգուցեալ մօր յիշատակին համար ընտրեց մասնաւորապէս այս օրս: Քաղաք մտնելէն առաջ յԱսիդի կեցաւ Հրեշտակաց Աստուածամանի կողմաւ տաճարին մէջ աղօթելու համար, որուն և ի մանկութենէ շատ ջերմեռանդ էր: Ամենամեծ ուրախութեամբ ընդունեցան զինքը քաղաքացիք. և սրբազան արարողութեանց հետ խառն՝ ամէն դասու քաղաքացիք տեսնելով իրենց փափագանաց կատարումը՝ մասնաւոր հանդիսով պատուեցին իրենց սիրելի Հովիւը:

Բ. — Իւր առաջին և ամենէն աւելի հաստատուն մտածութիւնն և զաւ պաշտպանել, յառաջ վարել և ծաղկեցնել ողջամիտ ուսմունքն մասնաւորապէս երիտասարդ կղերին մէջ: 1848ին բարեկարգեց իւր կղերանոցը, նորանոր կարգաւորութիւն և ուսմանց ընթացք հաստատելով. քիչ վերջը փերուճիայի համալսարանին ատենադպրի պաշտօն վարելով՝ հոն ալ նորանոր բարեկարգութիւններ հաստատեց. իր ազգամայր համալսարանին մէջ նոր բեմեր կանգնուեցան, և հռչակաւոր ուսուցիչը հրաւիրեցան այս հաստատութեան փառքն առաւել ևս փայլեցնելու համար: 1859ին իր թեմին մէջ դպրոցական աստուածաբանութիւնը տարածելու համար Ս. Թովմայի Ակադեմիոն բացաւ, և հոն կատարուած ուսումնական վարժք և վիճաբանութիւնք՝ շատ օգտակար եղան փերուճիոյ կղերին, և Ս. Թովմայի վեցերորդ դարաւարձին առթիւ հրատարակեալ զրուածոց մէջ յայտնի տեսնուեցաւ իրենց քաղած պտուղը:

Թեմին մէջ հաստատուելէն վերջը՝ երբ տեսաւ որ եկեղեցական վիճակի ցանկացող երիտասարդաց թիւը բազմացաւ, կղերանոցն սկսաւ

ընդարձակել, եպիսկոպոսական պալատին մէկ մասն ալ շնորհելով. իր առաջին երեք տարիները հասարակաց շինուածոց նորոգութեան նուիրեց, և այս երեք տարուան մէջ վեց հազար հոսովմէական սկուտ գործածեց: Սակայն եռանդուն Հովին հասարակաց գործոց պրաղիւր միայն բաւական չհամարեցաւ, այլ ուղղակի ուսմանց ընթացք կը կարգաւորէր, և ամէն միջոց 'ի գործ կը դնէր որպէս զի դաստիարակութիւնն օգտակար լինի ուսանողաց: Նոյն իսկ աշակերտաց եռամսեայ հարցաքննութեան ներկայ կը լինէր և ինքն ալ անձամբ կը քննէր զանոնք. ուսումնական և հետաքննական վիճաբանութիւններ և խնդիրներ կը յանձնէր աշակերտաց, փերոճիայի գիտնականներ, և այլ քաղաքացի եպիսկոպոսունս և ուսուցիչս յունկնդրութիւն կը հրաւիրէր: Երբեմն ալ յանկարծօրէն դպրոցաց կ'այցելէր. այս նկատմամբ ականատես ուսուցիչ մը այսպէս կը գրէ. « Երբեք պիտի չմոռնամ փէչի ծիրանաւորին վարուց մէկ դիպումա՞ծը. օր մը չեմ յիշեր ինչ պատճառաւ ճիշդ որոշեալ ժամուն չկարողացայ դեղեցիկ դպրութեանց դաստիարակութիւնն կատարել. յետոյ ուշ ժամանակ երբ հոսայ դպրոցին տո՛վն՝ սիրտս սաստիկ այլայլեցաւ, վառն զի այն ժամուն դպրոցին գաւթին մէջ յաճախ կը շրջէր ծիրանաւորն. երբ ես հասայ գաւթին՝ ուրախութեամբ սրտի տեսայ որ դիպումածով նոյն ատեն ծիրանաւորը հոն չէր գտնուեր, և երբ փութալով դպրոցին դուռը բացի՝ աննկարագրելի զարմանք մը պատեց զիս, երբ տեսայ որ ծիրանաւորն ինքնին իմ տեղս բեմին վրայ կանգնած՝ յափշտակեալ աշակերտաց Ս. Տուլբայ կտոր մը կը բացատրէր, և իր պերճ ոճով և նուրբ ճաշակաւ կը պարզէր հոովմայեցի ճարտասանին լեզուին ոճերուն և բացատրութեանց գեղեցկութիւն և ընտրութիւնն: Կրնաք լաւ երևակայել թէ արդեօք ինչպիսի զգացմանց և յուզմանց մէջ կը ծփայր իմ սիրտս նայն վայրկենին. բայց յետոյ ինքզինքս սրտապնդելով՝ ես ալ աշակերտաց կարգը նստեցայ և խնդրեցի ծիրանաւորէն որ սկսած դաստիարակութիւնն աւարտէ: Բայց ինքը բեմէն վար իջնելով՝ ազնուութեամբ հրաւիրեց զիս 'ի բեմն, և քաղցրութեամբ ժպտելով՝ յանձնեց որ այնուհետեւ աշակերտաց վրայ առաւելագոյն ճշդութեամբ հսկեմ: »

Գեր. փէչի մասնաւոր խնամք և հոգ կը տանէր որ երիտասարդ կղերիկսք փրիխտօքութիւն և գեղեցիկ դպրութիւնը աւարտելէն վերջը՝ աւելի ջանքով իրենց եկեղեցական դաստիարակութեան և ուսմանց վրայ աշխատին: Կղերանոցին մէջ գտնուած ամէն դասու աշակերտներէն՝ կարգապահութիւնն խստիւ կը պահանջէր, և կղերանոցին ըրած յաճախակի և յանկարծ այցելութիւնքն՝ մեծապէս կ'օգտէին ճիշդ կարգապահութեան. ըմբոստ և պակասաւոր աշակերտներն ինքն անձամբ կը յանգիմանէր, կը խրատէր և կը քաջալերէր. երբ տեսուչը կը նշանակէր պակասաւոր անձին անունը, իսկոյն առան-

ձին խուց մը կը կոչէր զաշակերտը, և առանց կոշտ բացատրութեանց կամ խիստ յանգիմանութեան՝ կը խրատէր զինքը, և երբ կը վերջացնէր ազգարարութիւնը՝ ամենու՝ ալ թերթ մը թուղթ կը յանձնէր, որուն մէջ իր ձեռքով մէկ կողմը աշակերտին պակասութիւնը կամ կիրքը նշանակած էր, իսկ անոր ալ առջևը անոր յաղթելու կամ անկից խոյս տալու կարևոր միջոցներ: Բնառոյ կը պատուիրէր աշակերտին որ այս թուղթը իբր արձագանգ մեծաւորին ձայնին և իբր ծրագիր մը իր անձին յառաջագիծութեան գրասեղանին առջև դնէ. և այս ուղղութեան գեղեցիկ միջոցը շատ անգամ ջերմեռանդն եպիսկոպոսին փափագն անյոյս չթողուց: Իր քահանայից և բովանդակ կղերին Աստուծոյ հաճոյ լինելու միակ և առաջին միջոց՝ զխոնարհութիւն կը վարդապետէր, և որպէս զի լաւագոյն ևս տողորէ զայն իր կղերին սրտին մէջ՝ նուիրեց անոնց 1871ին խոնարհութեան գրքոյկ մը, որ և յետոյ տպուեցաւ ՚ի ֆերուճիա:

Գ. — Բայց իւր ուսմանց վրայ ցուցած այսչափ հոգն և խնամքն՝ չմոռցուցին իր բովանդակ հօտին հոգեւոր պետքն և կարօտը, և ան բարեպաշտական հաստատութիւնները պաշտպանելու համար ըն՝ և բոլոր թիւն մը հաստատեց, և գրաւատունն ալ կարգաւորեց: 1857ին հասարակաց չքաւորութեան և կարօտութեան ժամանակ՝ նախահոգ պատրաստութեամբ և բաժանմամբ պարենից՝ ժողովրդեան մեծ ապէս օգնեց: Պեճիկա նուիրակութեան պաշտօնը կատարած ժամանակ Գր. թութեան Եղբարց ըրած օգուտը տեսնելով՝ ՚ի ֆերուճիա հրաւիրեց և իրենց ձեռքն յանձնեց արական սեռի որբանոցն. նմանապէս կոչեց ՚ի ֆերուճիա և զՔորս Աստուածածին Նախախնամութեան, և վտանգաւոր և ապաշխարող աղջկանց տունները, զորս ինքն հաստատեց էր՝ իրենց յանձնեց. քիչ վերջը քաղաքացի օրիորդաց համար յատուկ ժողովատեղի մը կանգնեց, որոյ հետ միացուց նաև ստորին կարգի աղջկանց դպրոցը: Ներեւան Ս. ֆիլիպպոսի պարտէզը կանգնեց՝ ուր կիրակի և տօնական օրեր կը ժողովէր զմանկունս և զպատանիս յուն կընդրութիւն և յուսումն քրիստոնէական վարդապետութեան. յետոյ երկարատև հիւանդաց համար ընդարձակ տուն մը կառուց:

Վեց անգամ կատարեց հովուական այցելութիւնն և եօթներորդն ալ սկսեց էր, և ամենին առիթ չէր փախցնէր հաւատացելոց ջերմեռանդութիւնը և եռանդը գրգռելու. մայր եկեղեցին շատ կը սիրէր և 1849ին եկեղեցւոյն յատակը մարմարիոնով սկսաւ շինել. քիչ վերջը մեծամեծ նորոգութեանց ձեռք զարկաւ, որոց համար զրեթէ քրտան հազար հօովմէական սկուտ ծախեց: ֆերուճիայի մօտ գտնուած Գրոշքեան Աստուածաճիւղի սրբավայրը ինքը շինեց. 1872ին իւր թեմը Երեսնի Ս. Սրտին նուիրեց. իւր եռանդեամբ և մեծ ազդեցութեամբ թեմին մէջ գրեթէ ամենայն ինչ նորոգեց. եպիսկոպոսական դատաստանը կարգի գրաւ, եկեղեցական արարողութիւնը չքեղագոյն հան-

դիպացան, իմաստնագոյն և խոհեմագոյն քարոզիչք յորդորուեցան ի
րենց Առաքնորդէն առաւելագոյն ազդեցութեամբ և սիրով քարոզե-
լու զբանն Առաւելոյ և Սրբոց պաշտօնը՝ մասնաւորապէս Ս. Կուսմն՝
նոր փայլ և պայծառութիւն ստացաւ:

Երեսուն և վեց եկեղեցի հիմնովին շինեց, երեք հատ ընդարձակեց
և շատեր ալ նորոգեց. եպիսկոպոսին վեհանձնութիւնը՝ բարի օրինակ
և գրգիռ մ'եղաւ ժողովրդեան, որով իւրաքանչիւր ոք ըստ իր կարո-
ղութեան կը փութար օգնելու իրեն ծախուց՝ դրամով և ուրիշ բազ-
մաթիւ միջոցներով:

Իւր եպիսկոպոսութեան ժամանակ գրած հովուական թղթերն և
յորդորներն՝ տնջին յիշատակ են իւր իմաստութեան և հայրական
խնամոց և գթոյն. միայն վերնագիրներն յիշելով կրնանք լաւ ըմբռ-
նել թէ ինչպէս յաջող առիթներ և ժամանակին յարմար դէպքեր
ձեռքէ չէր թողուր իւր ժողովրդեան ուսուցանելու համար. բայց նախ
եւեւաբայ յամանանք յիշելու որ իր ամէն թղթոց մէջ հաւատոց հաստա-
տութեան, տօներու, քրիստոնէական պարտուց, և շարէն փայտելու
հիմարեցն հետեւելու վրայ կը խօսի. 1857ին հովուական մը կը հրա-
տարակէ, որով խոհեմութեամբ կը յորդորէ զժողովուրդն՝ հեռա-
կենալ ի պեղմանց Մագնիսականութեան. երբ Յիսուսեղեցիք Եկե-
ղեցւոյ վիճակն տեսնելու ըրին՝ փէչքի Քահանայապետաց ժամանա-
կաւոր իշխանութեան վրայ գրեց. երբ նոյն իսկ սրբազնագոյն և բը-
նական իրաւունք մարդոյ փտանգի մէջ ընկան՝ Քաղաքական ամուս-
նութեան վրայ թուղթ մը հրատարակեց. յանկարծ աշխարհիս վրայ
Քրիստոսի վարուց ամբարշտ և հայհոյալից պատմութիւն մի կը հը-
րատարակուի, որ գրեթէ բովանդակ անհաւատից կամ թերհաւատից
ծափահարութեան և գովեստից նիւթ կը լինի, մեր եպիսկոպոսն ալ
չի համարուածեր և կը պատասխանէ յայտնելով իւր թեմականաց Ռը-
նանի անօրէնութիւնքն և ստույգութիւնք. իսկ վերջին չորս տարիներուն
մէջ երբ տեսաւ որ յայտնի կերպով կը պատերազմէին Եկեղեցւոյ և
Գլխոյն դէմ, իւր վարդապետական ձայնը բարձրացուց և ցըցուց աշ-
խարհի թէ որչափ մեծ է Եկեղեցին և Քահանայապետն և թէ այս մե-
ծութիւնս ժողովրդոց համար է ազբիւր ամենայն բարեաց: 1866ին Է-
կեղեցւոյ գերաւայտութեան և 1871ին Քահանայապետին վրայ կը ճա-
ռէր. 1876ին կը խորհրդածէր Եկեղեցւոյ վիճակը ժողդարուն մէջ.
1877ին Եկեղեցւոյ և Քաղաքականութեան վրայ առաջին հրովար-
տակ մը գրեց և քիչ վերջը՝ Ս. Պետրոսի Քահին վրայ բազմեղէն քանի
մ'օր առաջ՝ երկրորդ մ'ալ հրատարակեց նոյն նիւթին վրայ:

4. Գեր. փէչքի եօթը տարի փերուհոյ եկեղեցին կառավարելէ վեր-
ջը Եկեղեցւոյ Գլխը տեսնելով իր արդիւնալից վարքը՝ ուզեց մեծ
պատուով ծիրանաւորաց թուոյն մէջ դասել զինքը. և 1853 տարւոյն
գեկտեմբերի 19ին ծիրանաւորաց ժածուկ նստին մէջ՝ քահանայ ծիրա-

նաւոր անուանեց զԳեր. փէյլի՝ Ս. Կրիզոկոնի եկեղեցւոյն տիտղոսով։ Ահա այսպէս ապագայ Քահանայապետն սրբազան ժողովքին մէջ մտաւ. շատ ուրախացան փերուճիացիք երբ այս մեծ լուրն առին, և յաշորդ տարւոյն փետրուար 26ին կիրակի օրն որոյնցքին ասնելու այս անուանումը. և շքեղազարդ մայր եկեղեցւոյն մէջ նոր ծիրանաւորին մատուցած պատարագին ներկայ գտնուեցան քաղաքին ոստիկանութեան ներկայացուցիչք, ամէն գասու քաղաքացիք և յիշակայից պատուաւոր անձինք. և լրագիրն Osservatore dell'Umbria 'ի յաւերժ յիշատակ ապագայ սերնդոց այս փառաւոր հանդէսը մանրամասն կը նկարագրէր¹։

5. Այս շարժումէն վերջը՝ քանի մը տարի հանգիստ և խաղաղ անցաւ. բայց աղանդական ոգին շատ զարգացեր էր և 1859ին սկսան ընդդէմ՝ եկեղեցւոյ իրենց յայտնի պատերազմն և յարձակմունքն, զիմակաւորելով իրենք զիրենք իտալիոյ միութեան գեղեցիկ գաղափարով, այն միութեան՝ զոր ամենամեծ բարիք կը համարէին իտալիոյ և զոր պիտի ստանային՝ ամէն տեսակ շարիք մատակարարելով իրեն։ Այս խռովութիւնս իր սաստիկ և երբեմն անհաւոր արձագանքն ունեցաւ նաև 'ի փերուճիա։

Նոյն տարւոյն յունիս 14ին խռովարարաց խումբ մը, զրդեալ և պաշտպանեալ Դոպքանայի վարչութենէն՝ քահանայապետական կառավարութեան դէմ՝ ելաւ. բայց այս խռովութիւնս շատ չտևեց, վասն զի քահանայապետական զինուորք յարձակմամբ առին քաղաքը։ Ազատամիտ տպագրութիւնն հռչակեց այս դէպքս Կոտտրուճ փերուճիայի վերնագրով, յորում հրատարակողն կ'երևակայէր զինեալ կրօն

1) Ահա կը գնեք աստ ընթերցողաց առջև այս նկարագրութիւնս.

Փերուճիա 1 Մարտ 1854

«Անցեալ կիրակի, փետրուար 26, յիրաւի ուրախալի օր մ'եղաւ Փերուճիայի համար, և Փերուճեան եկեղեցւոյ արձանագրութեանց մէջ անուշալ յաւերժական յիշատակ մը պիտի մնայ։ Այս օրս որոշեր էին տմեկ մեր նոր ծիրանաւորին երջանիկ դարձն 'ի Հռովմայ։ Առաւօտը շքեղ կերպով զարգարուած մայր եկեղեցւոյն մէջ նոր ընտիր ծիրանաւորը շնորհակալութեան պատարագը մատուց, որը ներկայ գտնուեցան քաղաքին ամէն բարձրաստիճան պաշտօնեայք և համարարանի անդամք։ Տաճարին մեծ դրան վրայ ընդ մէջ ագիւլ գորգերու՝ հետեւեալ մակագրութիւնը կը կարդացուէր.

Sancta Perusinorum Ecclesia — Ioachimo Pecci — Antistite suo per illustri ac spectatissimo — munere SS.mi Patris Pii Papae IX — in amplissimum cardinalium S. R. Ecclesiae senatum — laetatur adscito — eumque nova hac splendentem gloria — vix dum gratulantium civium vota — bene auspiciato fortunat reditu — dulci prosequitur amplexu — Duemque optimum maximum — solemni ritu prodiuturna purpurati pontificis incolumitate — precatur effusa omnium frequentia ac laetitia — IV calendas martii MDCCCLIV.

նաւորներ որք թշուառ և խեղճ փախստականները կը վերաւորէին . այս յօդուածիս մէջ դարձեալ հռչակուէր քահանայապետական զինուորաց անլուր անդթութիւնը ընդդէմ անմեղ քաղաքացեաց . սակայն այս ամբաստանութիւնս հրատարակողն՝ նոյն և զայն ջրեց, երբ քիչ վերջը դրուատեալք և զսովութեամբ հրատարակեց Անքոնայի գնդականութեամբ և Նէապոլսոյ մէջ եղած հրդեհներն և հրացանաձգութիւնք: Դեռ տարի մ'ալ խաղաղ անցաւ . բայց 1860 սեպտեմբեր 14ին 15 հազար փիեմոնթեցի զօրականք ընդ Խալաշիւնդութեամբ Ֆրանցի զօրավարին՝ պաշարեցին զփերուճիա, և յետ զօրաւոր ընդդիմութիւն մը կրելու վերջապէս յարձակմամբ առին զայն, Յանուն վիկտոր Էմմանուելի՝ մարզգն Յովակիմ փէփոյի ստանձնեց քաղաքին կառավարութիւնն և այս կերպով Խալաշիւն միութեան չղթային վրայ օղակ մ'ալ աւելցաւ:

Դիւրաւ կրնանք երևակայել փէյի ծիրանաւորին սրտին զգացմունքն այս յուզմանց և խռովութեանց մէջ . իր աչաց ամենէն աւելի պօգաւ լին էր արեան և անբարոյականութեան տեսարանն:

6. փէյի՝ ապստամբութեան կանգնած նոր օրինաց և կարգադրութեանց՝ վեհանձնութեամբ դէմ կեցաւ, և երկու անգամ ալ մենաստանաց բարձման և քաղաքական ամուսնութեան օրինաց դէմ՝ ուղղակի վիկտոր Էմմանուելի համարձակ և իր աստիճանին արժանաւոր նամակներ և խօսքեր ուղղեց: Շատ անգամ իր պաշտօնէն ստիպեալ՝ ապստամբութեան գլխաւորաց հետ ևս զործ ունեցաւ, և երբեմն յաջողեցաւ չար խորհուրդ մը կամ անօրէն ծրագիր մը ջնջելու: Մինչդեռ Գեր. փէյի իւր սուրբ եռանդեան ցոյց կու տար, յանկարծակի լսեց որ քաղաքական դատաստանարանի առջև ամբաստանուեր է իբր պրդիլ և արևամարհող օրինաց քաղաքապետ: Թէպէտ դա

Սեանդուան ծիրանաւորն յետ Աւետարանին իր ժողովրդէան յորգորիչ և հայրենի բաշխութեան փրկարար խօսքեր ուղղեց: Պատարագէն վերջը հանգիստաւոր կերպով Սրբութիւնը դրաւ ի բազմոցի, զոր պաշտեցին կղերն և ժողովուրդն մինչև ցերեկոյ ջերմեռանգն յաճախութեամբ: Քսաներորդ երրորդ ժաման՝ ծիրանաւորն և քաղաքի քահանայապետական թեմական դարձեալ մայր եկեղեցին եկան ուր հանգիստ խառն ամբոխն շնորհակալութեան երգն հնչեցուց . այս երկու արարողութիւնք ևս շատ կարգաւորեալ կերպով կատարուեցան, բազմութեամբ երաժշտաց երգեցողաց և ընտիր երաժշտութեամբ: Քաղաքացիք խառն դիմեր էին ի Մայր Սիեղեցին և ամէն անգամ որ ծիրանաւորն իր պատուոյն պատշաճ հանգերձիւք կը բաղմեր ի դաճ կամ կը կանգնէր՝ Մայր եկեղեցւոյն հրապարակին մէջ խռնող ամբոխն ուրախութեան և սիրոյ աղաղակներ կ'արձակէր: Առաւօտը ոստիկանութիւնն ալ աղքատաց շատ դրամ բաժնեց . իրիկունն ալ բոլոր քաղաքը արտաքոյ կարգի փառաւոր լուսաւորութիւն մ'ըլլաւ և ծիրանաւորն ալ իր սեղանին վրայ տեսնելով բոլոր իր հրաւիրեալ բարձրաստիճան անձերն շատ դաճ եղաւ: Քաղաքին երաժշտաց խումբն ալ առաւօտե մինչև ցերեկոյ փոխ ընդ փոխ հնչեցուց իւր գեղեցիկ ներդաշնակութիւնն ի պատիւ նորընտիր ծիրանաւորին և:

տաստանարանը չընդունեցաւ այս ամբաստանութիւնս, սակայն ամբաստանողը բողոքեցին վերստին առ բարձրագոյն ատենան, և անդ ևս ընդունելութիւն չգտաւ իրենց ամբաստանութիւնն:

Իր երկար և դժուարին պաշտաման մէջ փէչչիի սրտին մեծ մխլթարութիւն էր մատենագրական ուսմունքն: Անյաղութեամբ կը կարգար և կ'ուսումնասիրէր լատին և իտալացի ընտիր հեղինակները և իր անձին կ'իւրացնէր այն մատենագրաց գեղեցիկ լեզուն և ընտիր բացատրութիւնն, և այս բանիս յայտնի վկային եպիսկոպոսութեան ժամանակ գրած հովուական թղթերն և այժմ իր քահանայապետական և բարձրագոյն կոնդակքն. բայց իր պաշտօնական գրութիւններէն գուրս՝ ունինք նաև ինքնատեղծ քանի մը լատին հատուածներ՝ յորս ումէն գիտուն ընթերցողը կը գտնեն ընտիր ճաշակ և ոսկեղէն լեզու: Իբրանաւորն փէչչի՝ փերուճիա կեցած՝ իր հանճարը և գիտութիւնը զանազան կիրպով բովանդակ էկեղեցւոյ օգտին համար ալ գործածեց, Հռովմայ եկեղեցական բարձրագոյն ժողովոց շատին անդամ էր. յաճախ մերձակայ քաղաքաց ալ ՚ի յանձնարարութենէ քահանայապետին արտասովոր այցելութիւններ կատարեց: Եպիսկոպոսութեան վերջին ատենները՝ Հռովմէական Համալսարանին առաջին ատենադպիր անուանուեցաւ. քիչ վերջը 1875ին քահանայապետն անուանեց զիրքը Պաշտօնական Ս. փրանկիսկոսի երրորդ եղբայրութեան նարգին: Եպիսկոպոսութեան ժամանակ շատ անպաճոյճ և անձանօթ կեանք մ'անցուց. որչափ որ պալոց հետ քաղցր՝ այնչափ ալ խիստ և բուռն էր իր անձին համար:

7. 1874ին Եփրանաւորն փէչչի կատարեց ՚ի փերուճիա իր եպիսկոպոսութեան յորեւեանը կամ քսանուհինգերորդ տարին. և այս գէպքըս նոր և պատշաճ առիթ եղաւ հանդիսից և սիրոյ արտայայտութեանց: Ճիշդ նոյն ատենները առաջարկեցին փէչչիի որ աթոռը փոխէ ՚ի Ֆրապատի, բայց ինքը համապատասխանել ուզելով իր որդւոց սիրոյն՝ յանձն չառաւ թողուլ զփերուճիա: Իր յորեւեանը յարմար առիթ առնելով օգնական եպիսկոպոս մը խնդրեց զոր, ընդունեցաւ. բայց զբարդաբար իր օգնականը երիտասարդ հասակ մէջ մեռաւ. այն ատեն երկրորդ մ'ալ խնդրեց, և այս անգամ առաջարկեց յեպիսկոպոսութիւն իր ընդհանուր փոխանորդը, զոր ընդունեցաւ քահանայապետն և իրեն օգնական անուանեց. փէչչի Հռոմ գնաց և անձամբ օծեց իր օգնական եպիսկոպոսը:

Քիչ ատենէն եկեղեցին պիտի կորսնցնէր իր քաջ և արթուն հովիւն զՊիոս Թ. քահանայապետն իր մահուրէն քանի մ'ամիս առաջ կարգինալաց ծածուկ նիստ մը գումարեց և զփէչչի կոչեց ՚ի պաշտօն Տեղապալանուքեան Ս. Գահին, փոխանակ Տէ Անճէլիս հանգուցեալ Ժիրանաւորին: Ս. Գահին պարապութեան ժամանակ այս պաշտօնն է ամենէն բարձրագոյնն և Տեղապահ Ժիրանաւորը կը կառավարէ

զվատիկան և զփակարանն . այս գործով Պիոս Թ ցըցուց իւր առ փէչչի ունեցած մեծ սէրն և համարմունքն , և կտրծես թէ ընտրող ծի . րանաւորաց՝ իւր մահուընէն քիչ առաջ ցըցուց իւր յախորդն :

Միրանաւորն փէչչի իր նոր պաշտամամբ հարկադրեալ՝ թողուց զփերուծիա և եկաւ բնակեցաւ 'ի Հռովմ . շատ ցաւեցաւ այս բաժան ման վրայ , և շուգելով թողուլ բոլորովին զփերուծիա , պահեց դեռ ևս իրեն փերուծետն եպիսկոպոսութիւնը : Հազիւ թէ փէչչի Հռովմ հասաւ՝ ճիշդ . նոյն ատենները 1878 փետրուար 7ին մեռաւ մեծ փա . հանայապետն Պիոս ինններորդ :

Աւարտն յառաջիկայս :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

(1848—1870)

ԳՐԱԴՆԻՔ

Բարձումն Լուի Ֆիլիփի թագաւորութեան

1 . — 1848 , բարեկարգութեանց փափազ . — 2 , Հացկերդի՜ք . Ընդդիմակացք 'ի խորհրդարանի . — 3 . 1848ի խորհրդարանի բացումը . — 4 . Յեղափոխութիւն փետրուար 24ի . — 5 . Օսելոն Պարո և Թէր Պաշտօնարան . — 6 . Անկումն Լուի Ֆիլիփի թագաւորութեան . — 7 . Խնամակալութիւնն . — 8 . Առաւմտեակեայ վարչութիւն :



ԼՍԿԻՋՐԵՆ 1848 ամին թէպէտ բոլոր Եւրոպա յուզեալ էր , և արդէն իտալիայ մէջ յեղափոխութեան կողմնակիցք յայտնապէս կը քարոզէին , բայց զժուար չէր ըլլար զանոնք ճնշելը , եթէ Վաղդիա նոր յեղափոխութեամբ մը աւելի տրծարծած չըլլար , ինքնիստ պալալով այն վարչութիւնը , զոր 18 տարի առաջ ազա . տական յեղափոխութեամբ մը ինքը իւր վրայ գրեւ էր :

Արդէն տեսանք անցելոյն մէջ կիզջի պէմ ձեռացած ընդդիմութիւնը 'ի խորհրդարանի . վարչութիւնը իրեն հակառակ ունէր թէ զաւակապետականս թէ՛ զհասարակեանականս և թէ՛ զօրինաւորականս , որք երբեք չէին մոռցած Լուի-Ֆիլիփի մատնութիւնը ընդդէմ՝ Կարոլոս ԺԻ . Ընդհանուր կտրծիք էր ամենուն որ ընտրութեանց բարեկարգութիւն մը շատ ցանկատենբու առջև կրնայ առնել . Տիւմբիթի տը Հօրտն և տը Ռէմիւզա զայն առաջարկեցին խորհրդարանին մէջ . Աւջինը կ' առաջարկէր՝ ընտրողաց թիւը բազմապատ . կելուլ համար՝ տրոմք իրաւանց գումարը 200 և 100 ի վերածուի . Երկրորդը կ' առաջարկէր որ խորհրդարանէն զրկուին պաշտօնակալ երեսփոխանք : Ընդ . հանուր գանգատ էր որ խորհրդարանը զվարչութիւնը կը ներկայացնէր քան զՎաղդիա . և այս պատճառաւ իսկ առաջարկութիւնքն ընդունելի չե . զան : Այ թէ կիզո հակառակ էր սյսօրինակ բարեկարգութեանց , ինչպէս